

ՑԱՆԿ
2012 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ

Պատասխանատու մարմին	Գերակա խնդիր	Գերակա խնդրի լուծման ուղղված քայլերը
<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն</p>	<p>1. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող ծախսային քաղաքականության ընդհանուր մեթոդաբանության ձևավորում</p>	<p>- Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող ծախսերի, օբյեկտիվ կարիքների ուսումնասիրություն և դրա հիման վրա, ըստ համայնքների մեծության, ծախսային կառուցվածքների տիպաբանության մշակում:</p> <p>- Պետական բյուջեից համայնքներին հատկացվող դոտացիաների սահմանված չափորոշիչների վերանայում նվազագույն չափի մասով:</p>
	<p>2. Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված՝ տեղական ինքնակառավարման մարմիններ - գործարար հարաբերությունների պարզեցում, հստակեցում և գործող ընթացակարգերի բարելավում:</p>	<p>- Վերհանել օրենսդրության այն դրույթները, որոնք կարգավորում են տեղական ինքնակառավարման մարմիններ - գործարար հարաբերությունները և շփումները:</p> <p>- Ներկայացնել առաջարկություններ՝ տեղական ինքնակառավարման մարմիններ – գործարար հարկային վարչարարության ոլորտի բարելավման վերաբերյալ (տեղական հարկերի մասով):</p> <p>- Ներկայացնել առաջարկություններ՝ տեղական ինքնակառավարման մարմիններ – գործարար հարաբերությունների շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմիններից վարչական կախվածության գործոնը էականորեն նվազեցնելու կամ պարզեցնելու ուղղությամբ (տարատեսակ թույլտվություններ և համաձայնեցումներ):</p>
	<p>3. Տարածքային զարգացման հայեցակարգից բխող նոր գործիքակազմի ձևավորում:</p>	<p>- Մարզերի տնտեսական զարգացման ներուժի գնահատման մեթոդաբանության ամբողջացում տեղեկատվական բազայի համալրման մասով:</p> <p>- Տարածքներում պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին կատարվող ներդրումների արդյունավետության հաշվարկում:</p> <p>- Մարզային զարգացման ծրագրերի իրականացման ընթացիկ և տարեկան արդյունքների գնահատում և աղքատության նվազման վրա այդ գնահատականների ազդեցության հաշվարկում:</p> <p>- Տարածքային զարգացման հիմնադրամի ձևավորման մոտեցումների և աղբյուրների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:</p>